ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

2010

ՄԱՐՏ 2011թ.

1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴԻՐ 1.1

Ծրագրեր գրելու հմտությունները զարգացնելու դասընթացների բացակայություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.1.1

15.07.2010թ.-ին ՀԵԻԱ-ի վարչության անդամների, գրասենյակների ղեկավարների և անդամների համար դրամաշնորհային ծրագրեր գրելու ուսուցման կազմակերպում (3 խումբ, յուրաքանչյուրում 10 մասնակից):

Կազմակերպվել է դրամաշնորհային ծրագիր գրելու հմտություններին նվիրված ուսուցում ՀԵԻԱ-ի վարչության անդամների, ՇՊԱԿ-ների և ՇՊԱԸ-ների, գրասենյակի աշխատակիցների և անդամների համար:

ԽՆԴԻՐ 1.2

Ֆինանսական միջոցների վերաբերյալ տեղեկատվության տարածման մեխանիզմի բացակայություն ՀԵԻԱ-ի անդամների և կամավորների շրջանում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.2.1

Ֆինանսական գործունեության վերաբերյալ պարբերական տեղեկատվության տարածում ՀԵԻԱ-ի ցանցի միջոցով ՀԵԻԱ-ի անդամների և կամավորների շրջանում:

Ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ՀԵԻԱ-ի անդամներին տրամադրվել է ՀԵԻԱ-ի համաժողովի ժամանակ, 2010թ.-ի դեկտեմբերի 4-ին:

ԽՆԴԻՐ 1.3

Ծրագրերի ժամանակավոր լինելը, դոնորների թվաքանակի կրճատման մտավախություն, ֆինանսավորման միջոցների նվազում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.3.1

Ֆինանսական միջոցների բազմազանության ապահովում և ֆինանսական միջոցների հայթհայթման հարցերով աշխատանքային խմբի ձևավորում:

Այս ուղղությամբ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, ստեղծվել է ֆինանսական ֆոնդերի հայթհայթման հարցերով զբաղվող աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Կարեն Զաքոյան - խմբի ղեկավար (ՀԵԻԱ-ի նախագահ),
Արտակ Սարիբեկյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի գործադիր տնօրեն),
Էդուարդ Սանուկյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի ֆինանսական միջոցների հայթայթման պատասխանատու),
Մարատ Ատովմյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի վարչության անդամ),
Ռոբերտ Գրիգորյան - խմբի անդամ (ՀԵԻԱ-ի վարչության անդամ):

ԽՆԴԻՐ 1.4

Ինքնաֆինանսավորման զարգացման պակաս, ֆինանսական աղբյուրների բազմազանության ապահովում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.4.1

ՀԵԻԱ-ի աշխատակազմում հնարավորության սահմաններում ստեղծել Ֆինանսական հայթհայթման հարցերով զբաղվող ստորաբաժանում:

Այս ուղղությամբ կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, սակայն դեռևս ֆինանսական հայթհայթման հարցերով զբաղվող ստորաբաժանումը ստեղծված չէ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.4.2

Առնվազն 5 դրամաշնորհային ծրագրերի ապահովում:

2010 թվականի ընթացքում ՀԵԻԱ-ն իրականացրել է 5 դրամաշնորհային ծրագրեր: Դրանք են՝

1. *«Իջևանի շահերի պաշտպանության և աջակցման կենտրոն».*
2. *«Հրազդան, Եղեգնաձոր և Աշտարակ քաղաքներում շահերի պաշտպանության և աջակցման կենտրոնների, իսկ Արարատ, Թալին և Ապարան քաղաքներում շահերի պաշտպանության և աջակցման ընդունարանների (տեղեկատվական կենտրոններ) ստեղծում և գործարկում».*
3. *«Երևան, Վանաձոր, Կապան, Հրազդան և Աշտարակ քաղաքներում Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների, իսկ Արարատ, Թալինի, Ապարան, Գյումրի, Իջևան և Եղեգնաձոր քաղաքներում Շահերի պաշտպանության և աջակցության ընդունարանների (տեղեկատվական կենտրոններ) ստեղծում և գործարկում».*
4. *«Լսված լինելու իմ իրավունքը».*
5. *«2010թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթ:*

<u>ԽՆԴԻՐ 1.5</u>

Դրամական միջոցների խնայողության պակաս:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.5.1

Կապերի հաստատում սփյուռքի հետ:

Այս աշխատանքները գտնվում են ֆինանսական միջոցների հայթայթման հարցերով աշխատանքային խմբի ուշադրության կենտրոնում, դրանց իրականացման համար կատարվում են համապատասխան գործողություններ:

<u>ԽՆԴԻՐ 1.6</u>

Կամավորական թևի ոչ ակտիվություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.6.1

Կամավորների ներուժի օգտագործում:

ՀԵԻԱ-ի գրասենյակների կողմից իրականացված բոլոր միջոցառումներին ակտիվորեն ներգրավել է կանավորական ներուժը, ինչպես նաև ընդգրկվել են նոր կամավորներ:

<u>ԽՆԴԻՐ 1.7</u>

Կազմակերպության գույքի խնայողաբար օգտագործում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1.7.1

Առկա միջոցների գույքագրում:

2010թ.-ին գույքագրում է կատարվել ՀԵԻԱ-ի կենտրոնական, Երևանի, Գյումրու, և Կապանի գրասենյակներում: Չի գույքագրվել միայն Գավառի գրասենյակը:

2. ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԽՆԴԻՐ 2.1

Ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ իրազեկության մեխանիզմի բացակայություն:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.1

ՀԵԻԱ-ի հանձնաժողովների և ակումբների գործունեության ակտիվացում:

2010թ.-ին իրենց գործունեությունը շարունակել և պարբերական միջոցառումներ, հանդիպումներ, սեմինարներ են կազմակերպել ՀԵԻԱ մարդու իրավունքների, եվրոինտեգրման և միջազգային համագործակցության հանձնաժողովը, մշակութային ակումբը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.2

ՀԵԻԱ-ի հանձնաժողովների աշխատանքների հստակեցում հանձնաժողովների անդամների հետ:

Այս ուղղությամբ աշխատանքները հստակեցվել են ՀԵԻԱ մարդու իրավունքների, եվրոինտեգրման և միջազգային համագործակցության հանձնաժողովի հետ, մասամբ՝ մշակութային ակումբի հետ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.3

Հանձնաժողովների անդամների հետ աշխատանք՝ ֆոկուս խմբերում՝ ՀԵԻԱ-ի կողմից անկախ փորձագետի ներգրավմամբ:

Այս ուղղությամբ ՀԵԻԱ-ի կողմից տարվել են նախապատրաստական աշխատանքներ: Ներկայումս այն ընթացքի մեջ է:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.1.4

Ծրագրերի տեղեկատվության տարածումը ՀԵԻԱ-ի պաշտոնական վեբ կայքի լիարժեք գործարկմամբ:

Յուրաքանչյուր նոր ծրագրի մեկնարկման մասին տեղեկատվություն է դրվում ՀԵԻԱ-ի պաշտոնական վեբ կայքում: Բացի այդ, ընթացքի մեջ է գտնվում ՀԵԻԱ-ի նոր վեբ կայքի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները, որն ավելի մեծ հնարավորություններ է ստեղծելու կայքի այցելուների համար՝ այն առավել ինտերակտիվ և ճկուն դարձնելու ճանապարհով:

ԽՆԴԻՐ 2.2

Նոր գաղափարների և նոր ծրագրերի և ծառայությունների պակաս:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2.1

Մոնիթորինգի միջոցով նոր գաղափարների հայտնաբերում:

2011թ.-ից սկսած նախատեսվում է կանոնակարգել ՀԵԻԱ-ի հանձնաժողովների աշխատանքները, որոնց աշխատանքային պլանում ընդգրկված են լինելու նմանատիպ միջոցառումների իրականացումը

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2.2

ՀԵԻԱ-ի հանձնաժողովների կայուն աշխատանքների արդյունքում ֆոկուս խմբերի ձևավորում և թիրախային խմբի ուսումնասիրում:

2011թ.-ից սկսած նախատեսվում է կանոնակարգել ՀԵԻԱ-ի հանձնաժողովների աշխատանքները, որոնց աշխատանքային պլանում ընդգրկված են լինելու նմանատիպ միջոցառումների իրականացումը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2.3

Սեմինարների և գիտաժողովների կազմակերպում:

2010թ.-ին ՀԵԻԱ-ի կողմից կազմակերպվել են 4 մասնագիտական գիտաժողովներ, որոնցից 3-ը հանրապետական նշանակությամբ, իսկ 1-ը մարզային նշանակությամբ՝ ՀԵԻԱ-ի Շիրակի մարզային մասնաճյուղի Գյումրու գրասենյակի կողմից: Դրանք են՝

1. *«Փաստաբանություն. մարտահրավերները և ներկա վիճակը ՀՀ-ում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական յոթերորդ գիտաժողով.*
2. *«Կոռուպցիայի դրսևորման ժամանակակից եղանակները և դրա դեմ պայքարը փոփոխվող աշխարհում» խորագրով հանրապետական ուսանողական գիտաժողով.*
3. *«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների դերն ու նշանակությունը ՀՀ իրավական համակարգում» թեմայով հանրապետական ուսանողական գիտաժողով.*
4. *«ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2009-2012թթ. միջոցառումների ծրագրի իրականացումը՝ որպես կոռուպցիայի հաղթահարման արդյունավետ միջոց» թեմայով մարզային գիտաժողով:*

Բացի վերոնշյալ գիտաժողովներից, ՀԵԻԱ-ի բոլոր գրասենյակի, ՇՊԱԿ-ների, ՇՊԱԸ-ների կողմից կազմակերպվել են իրավական ուսուցման սեմինարներ, որոնց մասնակցել են իրավաբան ուսանողներ, երիտասարդ իրավաբաններ, փաստաբաններ, «իրավունք» և «հասարակագիտություն» առարկաները դասավանդող ուսուցիչներ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2.2.4

ՀԵԻԱ-ի յուրաքանչյուր հանձանաժողովի կողմից առնվազն 1 դրամաշնորհային ծրագրի ներկայացում:

Այս ուղղությամբ նախատեսվում է լիարժեք աշխատանքները սկսել 2011-ից: Նախատեսվում է հանձնաժողովների վերանայում, հանձնաժողովների աշխատանքային պլանի կազմում, որում կներառվեն նաև դրամաշնորհային ծրագրերի ներկայացման մեխանիզմները:

3. Կառավարում

ԽՆԴԻՐ 3.1

ՀԵԻԱ-ի ներքին ցանցի և տեղեկատվության կառավարման մեխանիզմների ստեղծում:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1.1

ՀԵԻԱ-ի ներքին ցանցի ապահովում:

Աշխատանքներն այս ուղղությամբ ընթացքի մեջ են:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1.2

Տեղեկատավության տարածում mail list-ի միջոցով՝ կառույցի աշխատակազմի, անդամների և կամավորների շրջանում:

ՀԵԻԱ-ի աշխատակազմին և անդամներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, ինչն ավելի արդյունավետ է դարձրել կառույցի աշխատանքները:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.1.3

Բլոգի ստեղծում, գործարկում, տեղեկատվության տարածում, հետապնդելով հետևյալ նպատակները՝

- տեղեկատվության տրամադրում ՀԵԻԱ-ի վերաբերյալ.
- երիտասարդական ներուժի համախմբում.
- նոր գաղափարների գործարկում:

Այս ուղղությամբ ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները: Նախատեսվում է լիարժեք իրագործել 2011թ-ին:

ԽՆԴԻՐ 3.2

Աշխատակազմի նախաձեռնողականության ցածր մակարդակ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.2.1

Ոչ ֆորմալ հանդիպումներ կազմակերպում:

Պարբերաբար կազմակերպվել են ոչ ֆորմալ հանդիպումներ կազմակերպության աշխատակազմի հետ:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3.2.2

Ֆոկուս խմբերի կազմակերպում մարզային գրասենյակներում:

ՀԵԻԱ-ի Իրավաբան ուսանողների բաժանմունքի կողմից մշակվում են տարաբնույթ ծրագրեր նշված միջոցառման ուղղությամբ: